ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-5

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

19.12. 2023թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա.Ալեքսանյանը, Գ.Սիրոյանը, Գ.Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա.Պոտոսյանը, Ա.Մուրադյանը, Ա.Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, ՈՒԳ նախագահ Ի. Բադիրյանը, Հ. Սանթրոսյանը, Զ. Հարությունյան:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատման մասին(զեկ. Ա. Մարգարյան):
2. Հաղորդում 2-րդ կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):

Բաց քվեարկությամբ 15 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում՝5/1 ¬ Հաստատել նիստի օրակարգը:

1. ***Լսեցին.- 1-ին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում (զեկ. Ա. Մարգարյան):***

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ առաջին կիսամյակի քննաշրջանը կկազմակերպվի ժամանակացույցին համապատասխան: Նա նշեց, որ գրաֆիկը կազմվել է նախապես ուսանողների և դասախոսների հետ համաձայնեցնելով: Ամբիոնների դասախոսներին հանձնարարվել է ժամանակին ներկայացնել քննական տոմսերը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հաստատել I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

2. ***Լսեցին.- Հաղորդում 2-րդ կիսամյակում նախատեսված պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ(զեկ. Գ. Սիրոյան, Գ. Հովհաննիսյան):***

Գ. Սիրոյանը նշեց, որ արտադրական պրակտիկաներն են նախատեսվում Ֆինանսներ ըստ ոլորտի մասնագիտությամբ III և IV կուրսերում: Պրակտիկաները իրականացվելու են ժամանակացույցին համապատասխան: Նա նշեց, որ պրակտիկայի ղեկավարը պետք է ունենա ծրագիր՝ փոխհանաձայնեցված պրակտիկայի վայրի ղեկավարի հետ: IV կուրսի ուսանողները արտադրական պրակտիկայի ընթացքում կձևավորեն որոշակի

կոմպետենցիաներ, ինչպես նաև ձեռք կբերեն տվյալներ, որոնք անհրաժեշտ կլինեն ավարտական աշխատանքները պատշաճ ներկայացնելու համար:

III կուրսի ուսանողների արտադրական պրակտիկան միտված կլինի ծանոթանալ կազմակերպությունների կառուցվածքի, փաստաթղթերի հետ, սակայն միևնույն ժամանակ նրանք կարող են որոշակի տվյալներ ձեռք բերեն, որոնք կօտագործեն հետազոտական աշխատանքեր կատարելիս: Ինչպես նաև չորրորդ կուրսում ավելի արդիական ավարտական աշխատանքի թեմա առաջարկել:

Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց այն պրակտիկաների ցանկը, որն իրականացվելու է երկրորդ կիսամյակում: Նա նշեց, որ պրակտիկայի արդյունավետ անցկացման համար արդեն իսկ որոշվել է ամբողջ գործիքակազմը: Պրակտիկայի ղեկավարները ունեն իրենց ծրագրերը, որոնք նախապես քննարկվել և հաստատվել են ամբիոնի նիստում: Զբոսաշրջություն մասնագիտությամբ սովորող ուսանողներին հանձնարարվել է ինքնուրույնաբար ստեղծել իրենց բնակության վայրերի զբոսաշրջային օբյեկտների ներքին ու արտաքին միջավայրերի նկարագրությունն ու դրանց հագեցումը լուսանկարային նկարազարդումներով: Այս կերպ խրախուսվում է պրակտիկայի մասնակցի հետազոտական աշխատանքը՝ միաժամանակ նպաստելով նրա հայրենաճանաչությանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- II կիսամյակի պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ հաղորդումը ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***